

963. **ԽԱՉՔԱՐ.** բեկոր, նույն տեղում, 6 տող.

ԵՍ՝ ԱՂԲԱՐ ԱԲԵՂԱ, ԿԱՆԿՆԵ-

ՑԻ ԽԱՉԱ

ՎԱՆ ... Ա ԵՒ ԶՈՐՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍԻՆ:

[ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ]

ՅԻՇԷՑԷՔ Ի ՔՍ:

ՀՊՎԱ

Ծանոթ. Անունը գուցե թե *Աղբարաղեղ*:

ԱԹԱՆ

964. **ԽԱՉՔԱՐ.** գյուղի հանգստարան տանող ճանապարհի եզրին, ժայռի վրա, քիվին
և խաչահանգույցում, 3 տող.

ԱՍԵՆԱՓՐԿԻՉ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ:

ՔՍ ԱԾ

ՏՐ ՅՍ

ՀՊՎԱ

965. **ԽԱՉՔԱՐ.** գյուղից 3 կմ հյուսիս, մատուռի մեջ, 7 տող.

Ի ԹՎԱՂ ԿԱՆԻՍՂ ՀԱՅՈՑ

:ՈԾԹ: (1210), ԵՍ՝ ՎԱՐԴԱՆ

ՓԱՇԱՆ, ԿԱՆԳՆԵՑԻ

ԳՆՂԱՆ ՍՈՒՐԲ

ԽԱՉՍ Ի ՎԵՐԱՅ Հ

ԱՆԳՍՏԱՐ-

ԱՆԻ ՏՂԱՅՈՑ ԻՄՈՑ:

ՀՊՎԱ

Ծանոթ. Անհասկանալի է *ԳՆՂԱՆ* բառը: Հնարավոր է, դա խաչքարի որպիսությունը
վկայող արտահայտություն է՝ «գեղեցիկ», «գեղանի» և այլն (խմբ.):

ՍՊԻՏԱԿԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Շրջանի հնագիտական հուշարձանների պեղումների և շինաշխատանքների ընթաց-
քում գտածոները վերաբերում են բրոնզե դարաշրջանին: Դամբարանները հարուստ են
նաև հելլենիստական ժամանակների նյութերով (կավամաններ, մետաղական իրեր, քա-
րակերտ արձաններ): Վաղ միջնադարյան եկեղեցիներ կան Գոգարանում (IV դ.), Ար-
ջուտում, Շիրականուտում (Զիչխանավանք) և այլուր, որոնք, սակայն, զուրկ են գրավոր
հիշատակագրություններից: Շինարարական արձանագրություններ ունեն ժժ դարում
կառուցված փայտածածկ բազիլիկ եկեղեցիները: